


Թարեգում	14 զան
Գաւառներում	20 զան

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Թուրքական	4 թ. 50 4
Թուրքիա	50 թուրք
Եւրոպա	12 ֆրանկ
Ամերիկա	2 տոյար 50ս.
Ճայթաբարութիւններ	վճարը
Առաջին երեսում տողատեղը	5 շահի
Չորրորդ	3

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Թարգմանիչ Կոնստանտին Կապուրի
Միտի-Կոնստանտին Կապուրի (Porne)
Rédaction du journal «MITK»



ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սրանով լայնում ենք ի գիտութիւն Թաւրիզի յարգելի Հասարակութեան, որ այսօր Ապրիլի 14-ին, շաբաթ երեկոյ, Ղալալի Արամեան դպրոցի թատերասրահում, ուսուցչական խումբը, տեղիս սերողներէ մասնակցութեամբ՝ յօգուտ նոյն դպրոցի, կ'աւազայ համաշխարհային հռչակ վայելող Ռուս հեղինակ

ԴԱՍԱԵԻՍԿՈՒ

ՅԱՆՅԱՆՔ ԵՒ ՊԱՏԻԺ

(Предупление и Наказание) ամենայայտնի դրաման՝ 7 պատկերով և մի վերջաբանով. Թարգմ. բնագրից Գրիգոր Աղաջանեան. (Ուսուցիչ)

Տոմսակներ, ըստ սովորականի, չեն ուղարկուի և վաղորօք կարելի է ստանալ «Փարիզ» մագաղիտում, կամ պ. Վ. Վասիլեանից և ներկայացման օրը Ղալալի դպրոցում: Չեն տրուելու նաև կոնտրմարկեր:

Հոգաբարձութիւն
Արամեան և Ս. Աննայեան
Երկսեռ. դպրոցների

12 Մարտ 1912 թ.
Թաւրիզ

Լրագրական կամ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՀԱՅ. մշտնջողով պատուով ԲԱՊԵՏԸ

նի օր առաջ էջմիա-ծնի Սինոդից պաշտօնական հեռագիր եկաւ Ատրպատականի սուսնորդին, որին ծանուցուած էր Սուրենեան տեղակալի կաթողիկոս հաստատուելը թագաւոր Կայսեր կողմից:

Այսպիսով վախճաւ ստացաւ այն տարտամ գրութիւնը, որ յաջորդել էր դեկտեմբերեան տարապայման ընտրութեան:

Մենք չենք յիշում մեր ազգային կամ եկեղեցական պատմութեան մէջ այնպիսի մի դէպք, որն այնքան նախապատրաստական շարժումներ առաջացրած և փոթորկալից եղած լինէր, որ պիտի նկատուէր մեր վերջին կաթողիկոսական ընտրութիւնը:

Մի այլ անգամուայ թողնելով այս վերջին կաթողիկոսական ընտրական գործի սուրբ չափերէն նկարագրութիւնը, կասենք առ այժմ հետեւեալը: Նորա, որոնք պարծենում էին թէ իդ-միլիանի ընտրութեամբ «առաջդիմական» մի գործ էին արել, անշուշտ խորապէս հեռախափուցեցին նորա երեւոյն. անդեկ, անհաստատական և կարճօրէն խղճուկ կաթողիկոսութիւնը տեսնելով:

Ելլալիսիւր Իգմիրեանի մահից յետ «Նորը և ժողովրդական» դէմ շտեմբուլով, երկար ժամանակ մնացին լուռ և տարօրինակօրէն իրենք սպասեցին հասարակութեան ցուցմունքին: Ջգալով այդ կեղծ դրութիւնը, նորա աշխարհականներն ընտրութեան ապագային և

կամեղիական հարցն արծարծեցին: Մի հարց, որ մինչատրութեան կողմից հակաօրինական նկատուեց:

Եյս միջոցին բոլորովին այլ, որոշ, գիտակցական և հաստատուն գործելակերպի էր հետևում այն բանակը, որ մեզանում մկրտուել է պահպանողական կղերական սխալ անուամբ:

Այդ բանակը հէնց Իգմիրեանի ընտրութեան օրերում պաշտպանում էր ամբողջ ու ամբողջապարհից անաղ-ուած Օրմանեանի թեկնածութիւնը: Նա յամառ հետևողականութեամբ պաշտպանեց Օրմանեանին և վերջին ընտրութեան մէջ և բարձր տուեց իր լետից, գրէթէ, բոլոր Ռուսահայ թեմերը և Տանկաստանում էլ՝ անկախ մոաժողներին ու մտրակի սպառնալիքներից չվախեցողներին: Եյս բանակին եկաւ միացաւ և այն հոսանքը, որ յախուռնօրէն Օրմանեանին համարել էր մէկն այնպիսի կղերականներից, որոնց նշանաբան է Վթող կորչի դպրոցը և ապրի եկեղեցին:

Եյս միացեալ բանակը ձգտում էր ի վաճ կաթողիկոսութեան բարձրացնել ուժեղ, վարչապետ մեր եկեղեցական աշխարհային վերջ ու վախճան դնող և և բարձրագոյն կրթութեան տէր մի անձն յանձն Օրմանեանի: Իսկ հակառակորդ բանակը ի դէմս «Հորիզոնի» չունենալով ոչ մի կարկառուն դէմք, սկսեց բառախաղեր կազմել և ստեղծել ժողովրդի թշնամի ու ժողովրդի բարեկամ հոգեւորականներ, որոնցից առաջինն ձայն տալու չէ ժողովուրդը:

Մեր ազգի այն մասը, որ սիրում է օրօրուել զարգացում մակդիրներով, գրեթե այս վերջին հոսանքի յետնից: Կա

տարեւով ներքին ու աննրքի և խալուրդային՝ ընտրութիւններ խայտառղէտ այս զանգուածը Գեկտ. 13-ի ընտրութեամբ ի վաճ կաթողիկոսութեան բարձրացրեց այնպիսի մէկին, որ պահանջուած արժանիքներից ու յատկութիւններից շատ քչերն է կրում իւր մէջ:

Մենք այսուհետև կպայտենք ընտրեալի գործունէութեան, ծրարի թէ դա լինէր ի շինութիւն և ի բարեկարգութիւն մեր կործանուող եկեղեցոյ:

ՄԻՏԿ-Ի ԿՆՈՒԳԻՐ

Ապառնա 9/22 Ապրիլի Ժ. 8 — 50 ր.
Այլատեան առաջնորդն կոչուած լինելով էջմիաձնից երէկ մեկնեց:

ԲԱՆԱՍՏԵՂԻՑ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ 1)
(30 ամեայ յոբելեանի առթիւ)

«Ի՛նչպիսի վեր, սարն ի վեր, անվերն զինուոր»:

Ընդունելով, հայրենիքի սիրոյ համար նահատակուելը, հայրենիքի ազատութեան սուրբ սեղանի վերայ զոհուելը անձանթ երևոյթ չէ Յովհաննիսեանի համար. նրա զինուորը նոյն իսկ օրհնում է իւր բաղդը, որ միայն սուրբ հայրենիքի համար է իր կեանքը զոհել (91): Բանաստեղծը կծու խօսքերով նախատում է «փառաւոր նախորդաց ստրուկ ծնած, անփառք սնած» զաւակներին, որ թողած իրենց նախնիքների օրինակը, մոռացած Վարդանների առիւծական հոգին, կործանել են ազատութեան սուրբ պատկերը, ծաղրում են ազատասէր զգացմունքը. Նոր Յովհաննիսեանը բարձր էր կանգնել և խայտառակ պաշտամունք են կատարում (89). բայց և այնպէս Բանաստեղծի բնակողութիւնը, խառնուածքը, նրա եսը բողոքում են կարծես ամեն անգամ, երբ նրա զբէջք թողնելով պահ մի սիրոյ ու վշտի ասպարէզը, թեւեւութեամբ է հրապարակախօսութեան, կուռի ասպարէզը: Բնորոշիչ և սաղական են, երբ բանաստեղծն ասում է Գամառ — Գաթիկայի համար:

«Եւ նա երգեց մերթ տխուր, ինչպէս մրմունջ դաւաճ»:

Մերթ պոկելով գայրագին չարի դիմակ նենգաւոր:

Մէկ էլ հուժկու հարուածով ասես թափում էր կրակ —

Այն անվերն մի մարտի զոհանքում էր գոռ կոչնակ (156):

Բայց խորթ ու անհարազատ երբ նա գայրացած բացականչում է:

1) ՏՊՈՒՄ 1912 թ. 6

1. Մեկ գրողներից խնդրում է գրեն պարզ, մաքուր և անպայման քղբի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք «Ի» և «Ի» ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը օպել մեր ընդունած ուղղագրութեամբ — ու — ու:
4. Չապում կարճ յօդուածները չեն վերապահում: Ուղարկուած և շտապում: Երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած, եթէ դա կեղծ անուն հետ միաժամանակ չի կրթողութեամբ իսկական անուն ազգանունը:
6. Բաժանորդները թեթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չապում յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար էպետք մեկ ուղարկել 2 դաս 10 շահի:

«Եւ կամենում եմ այն կեղծ երեսին Տալ ճշմարտութեան սուրբ խօսքն անկաշառ, Իւր անեղ փողի որոտ» ականջին Հասցեն մի մեծ, սոսկալի բարբառ (49):

Հրապարակախօսութեանը, կուռի մաքառման դաշտը չէ բանաստեղծի տեղը, այդ չէ նրա կոչումը. նա կոչուած է այլ գործ, այլ պարտք կատարելու և հէնց այդ կոչման մասին շեշտում է մի քանի անգամ: Բանաստեղծը աշուղից պահանջում է «սրտի» խօսք, որ վերհանի մեր հոգին, «գեղարք» — թմբածնների, լեզու առաջնորդների ու լալերին:

«Ա՛ն չունգուրդ, տուր լալերին, կրակ վառիր մեր սրտում, Մեկ ամենիս նոր շունչ տուող մի բան ասուրտային» (4):

Բանաստեղծի քնարի լալեր՝

«Թող հնչեն նորից հին երգերը անմահ, Եւ վառեն սիրով սրտերը մարդկան, Թող նորա նորից օրհներգն անահ Գործերը բարւոյ և կարեկցութեան» (55):

Երգչի պարտականութիւնը պիտ լինի զարթեցնել մեր քնած զգացմունքը, վառել մեր սրտերում ագնիւ կրքերի հուրը (57): Նա պէտք է եօթնադի քնարն առած ասպարէզ ելնի և տանջանքի օրհներգ տալ մեզ:

«Կամ թող հնչեն հզօր լալեր, Որպէս փողը յաղթական, Թողան ուժգին թմբած սրտեր Գայլի սուրբ խաչ վկայութեան» (104):

Թէ որքան լալողութեամբ է կատարում բանաստեղծն իր պարտականութիւնը, որքան հարազատութեամբ է ծառայում իր զեծ կոչմանը, դժուար չի տեսլ. հերթ է նախ այն ոտանաւորները, որոնք լուռ ու հաւատ են ներշնչել — (Տեսնում եմ անհա, խաչի ճեմոյ, Սառն ի վեր, Հաւատում եմ, ա՛խ, ես գիտեմ, Մե՛նք միասին. Չգիտեմ ինչու և այլն և այլն) Ընդհանուր ներդաշնակութիւնը խանգարում են այն ոտանաւորները, որոնք արտայայտում են լուսահատ վիճակ (Եւ եկաւ զարուհ, Նոր զարուհ և այլն): Ի հարկէ, դժբախտ դէպքերն ու հանգամանքներն են, որ բանաստեղծին գործելին աշխատում լուսահատութեան անգունը: Բոլորի ազգացութիւնն է, որ շուտով անցնում է: Եթէ կալ մի մեծ բան, որ պակասում է բանաստեղծին, այդ գործը կամքն է և հաստատուն համոզմունքը: Հէնց այդ պատճառով էլ բանաստեղծը երբեմն գործը կերպով ազգուած է իր անմիջական շրջանից (Անդրոյս խաւար. Փրկութեան խաչը, Լուսաւորչի կանթեղը և այլն), երբեմն երկբայութեան, կասկածանքի հովերով տարւում, երբեմն ընդհանուր ճակատագրի հզօրութեան առջև:

Թեոֆիլոսիանականները պարտութեամբ Գաբրիելին նախկին թագաւոր Ամիտ Սալ- թանէն իւր կեանքի փրկութիւնը Ռուսաց հովանու տակ գտաւ՝ ապապտանելով հիւ- պատառարանում, ուր մնում էր մինչեւ այժմ նա, որ հարիւր հազարներ ունէր, եւ վերջերս շատ անգամ գիւնացիներին ծանօթ քա- թա փառով էր ետդա քննում մինչեւ այժմ։ Ռուսաց զօրքի Գաբրիելի մահն ինչ- յեւայ, Ամիտ Սալթանէն իւր իրաւունք- ները վերականգնեցնելու ամեն միջոցներ ձեռք առնելով՝ վերջապէս լաշողացրեց Թէհրանից իւր տղին դատաւոր նշանակել տալ Գաբրիելին վրայ։ Սալթանադը եթէ ապացից քարկարեցիներէ դիմադրութեան կարողանալ դատաւոր նստել, հաւանօրէն զօրքը կանցնէր դէպի Արդաբիլ և Ռուսաս- տան։ Իսկ եթէ Գաբրիելը ժողովուրդը այնքան տգէտ լինէր որ դիմադրութիւն ցոյց տալ, ո՞վ գիտէ ինչեր կ'լինեն ու բացի ցամաքային զօրքից՝ Ардаганъ նաւն էլ է գնացել այստեղից, եթէ դիմադրութիւն չլինէր ծովից ռմբակոծութեան պիտի եկ- լի թարիկ նրանց։

Գաբրիելը փախել է նրանց պարա- զուէր Մէլիք Աշրաֆը, Ռաշտու Դեկտեմբերեան դժբախտութեանց հերոսը։

Անհաս

30 Մարտ Մարտի

Մարտի 1-ին կենսական միջերեւոյթ ստիպելով թանգացել են։ Անտանիքի չա- փերի է հասել ալիւրը։ Ալիւրի լիզը ծախ- լում է 5 դր. 8 շահի, լաւը, որ շատ քիչ է գտնուում, ծախում է 5 դ. 10 շ.։ Երէկ, ամսույ 29-ին, մի քանի հար- իւր սոված կանաչ եկան լցուեցան հայոց թմրիկի ինչ եղանակով մէջիդը—Իմամզադան ուր շուտով եկան և նախկիններին խառն- ուեցան ուրիշ մի քանի 100 քաղցածներ ևս։ Գաղցածների այդ բազմութիւնը սերտ-կարատող ձեռով աղողակում էր «հաց—հաց»։ Մի երկու ձած աղողողա- ղակիւն լցուեց, ցոյց կազմելով՝ նոյն բազմութիւնը բազարով դիմեց դէպի հե- ռազրատուն։ Բազարի մարդիկ վախենա- լով սովածներից՝ իսկայն խանութները փա- կեցնեցին։ Կարճ ժամանակ անց՝ այդ դժբաղդ ամբողջ խաղաղուեց և բաւարարուեց։ Կարճուում է։ Թաւրիզից Եօջա-Բոլից հրաման եկաւ, որ սովածներին հաց տան մինչև նոր ցորենի դուրս գալը։

Համաձայն այդ հրամանի կարգադր- ուեց, որ այդ մի քանի հարիւր կանաչն ու մարդկանց, տեղույ դատաւորի մի- ջոցաւ, օրեկան 3 սանկակ (հաց) տան։ Ըսկ ցոյցի պարագլուխներէ մի քանիսն ընկեցին, և բանդարիցիւն Բրուտիւնը շատ վատ է։ Մինչև նոր ցորենի դուրս գալը բաւական շատ ժամանակ է մնում, իսկ հացն էլ օրական 5 շահի թանկանում է։ Ալիւրի թանգանալու մեծ պատճառ- ներէ մէկն էլ իշապաններն են, որ ան- դադար և քնեծ քանակութեամբ ալիւր են պրտահանում քաղաքից։ Եթէ այդ ար- գելուէ շատ հաւանական է, որ ալիւրի արժէքը կտրուի։

Թանգութեան պատճառով թուրք քաղցածները ոյժ են տուել գեղութեան։ Այս քանի օրերը գողերը մտել են հայի- ըք տները և աղբիւններ տարել։ 2օրն հայի տնից տարել են մի ինքնատեւ, կաթ- սանեք, օկուտեղներ (մէջմէհներ) ամա- նով իւր, ամանով զուլուրմա։

Այս քանի օրերս տեղս շատ ձիւնա- խառն անձրեւ եկաւ և շուտ էլ հալուեց։ Երեկոյան խիտ ցուրտ արաւ։ 21/2 մատ հաստութեամբ սառուց էր կապել։ Նշերն ու ծիրանները բոլորն էլ ցրտահար եղան ու փչացան։ Այգիները կապալաւունները (իջարադարները) մնացել են ձեռները ծոցին։ Թշուառ է մանաւանդ հայոց դրութիւնը, որովհետեւ տեղիս հայերի

մեծամասնութիւնը չքաւոր ու օրավար ձով ապրող մարդիկ են։

Լրսմ.

Լ Ո Ւ Ր Ե Ր

ԹԱՒԻԶ

Ապրիլ 8-ին, համաձայն առաջնորդա- ռաւի պաշտօնական լաղարարութեան, պատրաստեց լիտու, մայր եկեղեցում կա- լացաւ նոր հայրապետի համար մողթանք։ Սրբազան առաջնորդը մի քարոզով բացա- տրեց հայ եկեղեցուն հասած սգի վերա- ցումը և մաղթեց նոր հայրապետին ոյժ՝ արդենաւէտ իշխանութեան համար։

Սրբազան դպրոցի մանկավարժա- կան խորհուրդը մարտ 14-ի ժողովի վճռի համաձայն, առանձին թերթերով ծանու- ցեց ծնողներին Բ. և Գ. դասարանների թույլ սաների մասին ծնողներին և խնայեց առանձին ուղարկութիւն նորանց վերա- բերմամբ, որովհետեւ երկրորդ տարին նոքա նորն դասարաններում մնալու դժբաղ- դութիւն չունենան։

Ահարից ամսույ 10-ին ստացուեց Արամեան դպրոցի հոգաբարձութեան պա- տասխան հետագիւրը, որով Սարգսր Սաթ- վաթը յայտնում է, որ համաձայն Սարգսր Ռաշիդի հրահանգի, Եօջա—Էլ—Մամուլի քր. Է. հրահրաման խանը իբրեւ ժամուրներ ուղարկուած են Լոյսահիմ և Հաթամ խա- ներին բռնելու։ Հետեւապիւղուողներին շուտ գտնելու համար, Սարգսր Սաթվաթը ընկեր է տուել նաև Հէօթեր—Դովլին։

Քեարիմ խանից քանգառաւոր Քէյ- վանցի հայերը, որ մի քանի օրից ի վեր ապրում են Արամեան դպրոցի դասարան- ներից մէկում, շուտով Ձհանգիր բէկի առաջնորդութեամբ կսկսեն իրենց դատը Քեարիմ խանի դէմ։

Թաղապետի ոստիկանները իմաց են տուել տները, որպէս զի դռները կող- պած պահեն, ազատ լինելու շրջող գողե- րից, որոնք շատացել են հացի տիրող թանգութեան պատճառով։

Թաւրիզի էսպէրանտոստները ըն- կելութիւնը պատրաստում է տանելու Մալիսին էսպէրանտո լեզուի քսանհինգ- ամեակը։

Նոյն ընկերութեան նախաձեռնու- թեամբ Թաւրիզում Ապրիլ 11-ից բացուել են էսպէրանտոի դասընթացներ, որոնք տեղի են ունենում Ապա թաղի դպրո- ցում, չորեքշաբթի և շաբաթ, օրերը, երեկոյան ժամը 5-ին։ Սովորել ցանկա- ցողները ուղարկութեամբ կընդունուեն։

Վճարն ըստ կամաց։

Ապրիլ 12-ին, առաւօտեան ժամը 6 1/2—8 1/2 սաստիկ ցուրտ եղանակի հետ սկսեց գալ մանրահատիկ ձիւն։ Ապա մինչև 11 ը եկաւ անձրեւ։ Այնուհետեւ երկինքը պարզեց։

Ստացուած հրատարակութիւններ
«Հանգէտ Ամօրբույ» № 2—3 (միացեալ տետրեր) և № 4-ը։

ԱՏՐՈՍԱԿԱՆ

Ռուս—Ցաճկական սահմանային թիւ- րիմացութիւնները վերացնելու պատճա- ռով Ցաճկաց կողմից Խոյ էր հասել Ջաբր փաշան։ Ատրպատականի Ռուսաց զօրքերի ղեկերով Վօրոպանովը իր սպաներով այ- ցելութեան էր գնացել նորան։ Փաշան ևս իր սկիտայով այցելել էր փոխ հիւպատոսին և գնեցելով Վօրոպանովին ու լայնեւ, թէ բաղաւոր է, որ իր միջոցով հարթ- լուծ են սահմանային ծիծիւները։ Ցաճ- կաստանը, սակ էր փաշան, թշնամական զգացումներ չունի դէպի հզօր հարեանը։ Փաշան իր երկիր վերադարձին Քեօհնա Շէհրում գիւնուրական պատիւ է տուել ռուսական զօրքին։

Մարտից մեզ հասած վերջին

լուրերից իմանում ենք, որ հանդուցեալ Մարգարեան Առաքի կնոջ իրաւունքի պաշտպանութեան հարցում վաճառակա- նապետ պ. Զ. Մել. Ազարեանը նպաստա- ւոր դիրք է բռնած եղել և լայտեւել, որ երկու կողմից կանչուեն 5 ական մարդիկ և հարցը հրաժարի իրաւախոհութեամբ։ Սակայն այդ առաջարկը մերժուել է և գործը հասել է առաջնորդարան, որտեղից կրկնակի հրաւան է գնացել Պօղոս Մար- գարեանին, որ կամ կնոջ եօթից մէկ բա- ժին տալ և կամ Թաւրիզ գալ։ Պօղոսը մերժելով առաջնորդարանի հրամանի, հարկ է տեսնուել, որ Եօջա-Դովլից հեռա- ղրական հրաման առնուի և ուղարկուի։ Համաձայն վերջին հեռագրի՝ Պօղոսն ար- դէն հասել է Թաւրիզ և ամսույ 11-ից առաջնորդարանում սովորու է այրու դատը։

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Էջմիածնի Սինոդի պաշտօնական հեռագրով ծանուցել է Կարապետ եպիս- կոպոսին տեղակալ Սուրենեանցի՝ Կայսեր կողմից կաթողիկոս հաստատուելու։

Փարիզում ուսած Երուանդ Մա- նուէլեան անուն հայ բժիշկը իր մի աշա- տութեամբ նոր տեսութիւններ է տալիս կարծեւրակութեան (arteriosclerosis) ծագ- ման մասին։ Սրտ տեսութիւններից մի քանիսը ջրում Են պրօֆէսօր Մեշիկովի մի քանի Կարճիքները այդ հիւանդութեան մասին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

МАТЯЗННЪ МАРЖЪ

Propriétaire J. D. Thomassian

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Նորերս ստացել եմ կանացի ամառային բնորոշ կտորներ, բաւական բաւական 8—14 դրան։
Սպիտակեղէններ, Կարմիրներ, Մետաքսէ իւպկաներ և թաշկինակներ։
ՊԵՐՓԻՐՄԵՐԻ
Օղը կօլօն, օճառ խիստ աժան, կոնակի, լիբրի, բորձոյի, շամ- պանյի, գարեջրի և ջրի յառաւ բաժանիկներ և սերվիսներ։
Սալօնի հրաշալի սեղանիկներ զանազան տեսակի և արժէքի։
Տղամարդկանց կակողք բոլոր, ամառային շապիկներ, Գրպանի ան- գլխական ժամացոյցներ կարմնափ երկու արուան—16 դրան։
Կանացի գլխի մօդի վարդարաններ, խաղի բնորոշ կարտեր, կօշիկ- ներ և գրամաֆօններ խիստ աժան և բնորոշ։
Ընդունուում են ամեն տեսակ պատուէրներ զաւառներից և բաղարի խանութպաններից, և մեծ քանակութեան համար փոքր կօմիսիայով կրաւ- կանանայ։



Գ Ա Ր Ո Ւ Ն

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲՈՂԻՆՆԵՐ)

ԲՈՒՈՐՈՎԻՆ ՆՈՐ—ստացած ապրանքներ Ապրիլի 4 ինք

1. Տղամարդկանց ամառային խորտ գլխարկներ, 2. վարատնիկները ամուր պահելու ձեղնիներ, 3. սպիտակ լիտիւր քաթաններ, մետաքսէ կտորներ, սպի- տակ պիկներ, երեսի շապիկացուներ, աստառացուներ զանազան գոյների։
4. Տղամարդկանց գլխական խաղի կտորներ, 5. Գուլպաների ձեղնիներ, կա- նացի թաշկինակներ, փորկապներ և այլն և այլն։

ԹԱՒԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Վերսկուել է երթեկի և գիշե- րօթիկ հիւանդների ընդունելու- թիւնը ամենայն օր առ. Ժ. 10—12։
Այն աղքատները, որոնք պ. Բալարբեզուց վկայական կունե- նան, կը բժշկուեն ձրի։
Հիւանդանոցի կառավարիչ բժիշկ Վահան Գեղորեան

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ Больница

Возобновился амбулатор- ный и стационарный прием- больных, ежедневно отъ 10—12 часовъ. Бѣдные по запискѣ отъ Г. Бай ларбегі принимаютъ безплатно Завѣдующій больницей докторъ Ваганъ Геворкянъ